

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՐ

Հայազխուրթիւնը կ'ողբայ իւր անխոնջ վաստակաւորներէն միոյն անդարձ կորուստը : 1934, Գեղեմեմբեր 20ին վախճանեցաւ ի Լեւինգրադ հայերէնագէտ, բանասէր եւ լեզուաբան Նիկողայոս Մառ, 70ամեայ հասակին :

Ն. Մառ ծնած է Գուլիսթայիս 1864ին . հայրը Յակոբ Սկովորայի էր եւ մայրը Վրացի : Առնելով միջնակարգ կրթութիւնը ծննդավայրին մէջ, կ'անցնի Պետերբուրգ, 1884ին, յաճախելու տեղւոյն Համալսարանը : Կը մտնէ Արեւելեան Լեզուաց Բաժինը . եւ կը հետեւի արաբական-պարսկական-թուրք-թաթարական, արաբական-երբայական-ասորական, հայ-վրական եւ սանսկրիտ-պարսկական-հայկական լեզուներու դասընթացքներու . կ'աւարտէ ուսմանց ընթացքը արժաթեայ միտալով : Իր ուսուցիչներու թուին մէջ էր ուսուցչապետ Քերովը Պատկանեան, որուն քով կ'ուսանէր հայերէնը : Պատկանեանի մահունէն (14 Ապրիլ 1889) ետքը հայերէնի աթոռը կը վերապահուի Ն. Մառին :

Այն ինչ աւարտած համալսարանական ընթացքը՝ 1890ին ստառը կ'այցելէ Հայաստան, ուսումնասիրելու էջմիածնի եւ Սեւանի հայերէն ձեռագիրներն ու ծանոթանալու ի մերձուստ երկրին ու ժողովուրդին, որուն քաղաքակրթութեան պատմութեան պիտի նուիրէր իւր մտաւոր ոյժերը : 1891ին կը կարգուի Պետերբուրգի Համալսարանին Արեւելեան լեզուաց Բաժնին առանձնական ուսուցիչ (Privatdozent) : Յաջորդ տարին թոյլտուութիւն ձեռք կը բերէ Կոյսերական Հնագիտական Յանձնաժողովէն եւ Հնագիտական Ընկերութեան Հայաստանի մէջ պեղումներ ընելու նոյն Ընկերութեան հովանաւորութեան տակ : Նոյն տարւոյն Մարտ 5ին կը գրէր «Հանգէս Ամսօրեայ»ի Խմբագրութեան . «Ամսոյս սկզբում մեկնելու եմ մայրաքաղաքիցս Ռ. Հայաստանում հնագիտական նպատակաւ պատելու եւ տեղտեղ փորելու համար մինչեւ օգոստոսի առաջին օրերը» :

1893ին նոյն նպատակով նորէն Հայաստան կ'անցնի, պեղումներ կատարելու Երեւանեան շրջանի եւ Ծիրակի եւ Բորչալու գաւառներու մէջ . ի խնդիր էր հնագրեան դամբանարաններու : Առ այս կը գրէր «Հանդիսի» Խմբագրութեան . «Մայիսի սկզբում նորից պիտի փորումներ շարունակեմ Անիում . սա էլ թէպէտ եւ ցանկալի, բայց պատճառ մի զրկողութեան :

այս ամառս ես մտադիր էի ձեզ մօտ հանդիպել հայկաբանութեան մէջ կատարելագործելու նպատակաւ . չեղաւ» : Նոր պեղումներ կատարեց Անի 1894ին ալ : Թէպէտ բահի եւ բրիչի հարուածները երեւան բերին շատ նորութիւններ, բայց ստիպուեցաւ Մառ ընդհատել աշխատանքները, որովհետեւ կը պահէին իրեն նիւթական միջոցներ :

Իւր փափազը այցելել Վիեննա իրականացաւ միայն 1896ին . այս տարի յաջողած էր իրեն ուղեւորութիւն մը կատարել գէպի Եւրոպա, ուսումնասիրելու Վիեննայի եւ Վենետիկի Միսիթարեանց հայերէն ձեռագիրները . ճանապարհը հանեց զինքը նաեւ Հոռոմ :

1898ին գիտական արշաւանք մը կատարեց գէպի Աթոս, հետազօտելու Եվրոս մանքի վրացերէն ձեռագիրները . հարուստ աւարով վերադարձաւ Պետերբուրգ . ուր գտաւ իւր ընդարձակ աշխատութիւնն՝ «Ժողովածոյք Առական Վարդանայ» արդէն ստացրութեամբ աւարտած . զոր ներկայացուց իրրեւ մագիստրոսական քննաձեռն Համալսարանի Վարչութեան . եւ պսակուեցաւ (1899) «Մագիստրոս հայ գրականութեան» տիտղոսով :

1901 ամառը անցուց Հայաստան . պեղումներ կատարեց Դուին եւ Արտաշատ : Յաջորդ տարին ձեռնարկեց հեռուոր ուղեւորութիւնը գէպի Սինայի եւ Երուսաղէմ, յուսով երեւան բերելու նոր վրական ձեռագիրներ . գտաւ ի մէջ այլոց Գրիգոր Լուսաւորչի վաղքին արաբերէն մէկ խմբագրութիւնը :

1904ին վերադարձաւ Ն. Մառ Հայաստան . նոր թափով վերակաշարեց Բաղրատունեաց մայրաքաղաքը՝ Անիի պեղումը : Այնուհետեւ մինչեւ 1917 գրեթէ ամբողջ կը գտնենք զինքը այս միջավայրի մէջ : Հոն կ'անցնէր իւր ամառուան արձակուրդը : Հայ ժողովուրդը՝ սղեւորուած պեղումներու սրբիւնքէն, կ'ըջալերէր առատ նպաստներով գիտութեան անխոնջ վաստակաւորը : 1912 Յուլիսին պատահեցայ ուսուցչապետին իւր աշխատութեանց մէջ : Սեւացած արեւի կիզիչ ճառագայթներու տակ, բայց սոոյգ անձամբ եւ շատ հազրդուած օր աւուր յայտնաբերուած հնութիւններէն՝ կը հետեւէր աշխատաւորներու բահի եւ բրիչի հարուածներուն :

1909ին անուանուեցաւ Անդամ Կոյսերական Ակադեմիայի : Այնուհետեւ մրցեցան Ընկերութիւններ եւ Հիմնարկութիւններ իրարմ հետ պատուոյ անդամ գրելու համար Ուսուցչապետը : Իր Զանքերու շնորհիւ յաջողեցաւ

Մառ Համալսարանի մէջ հաստատել առանձին աթոռ հայ-վրական բանասիրութեան համար :

1911ին ուղեւորեցաւ ի Սուանիա եւ 1913ին յԱրխաղիա բարբառաղիտական հետազօտութիւններ կատարելու :

1918ին Թրքական բանակին յառաջխաղացութիւնը ստիպեց զինքը Անին լքելու : Հապճէպով փոխադրուեցան Անիի թանգարանին կարեւորագոյն աւարկաները Երեւան-Թիֆլիս . շատ բան աւար մնաց թշնամեաց . մաս մ'ալ ճանապարհին մատնուեցաւ կորուստի : Մնացորդը կը պահուի այժմ Երեւանի Պետ. Թանգարանին մէջ :

Մեծ պատերազմի ընթացքին, երբ ուսական բանակը յառաջ կը խաղար գէպի Տաճկական Հայաստան, կազմակերպեց Ն. Մառ գիտական արշաւախումբեր, որոնք կ'ընկերանային յաղթական բանակին, հետազօտելու նուաճուած երկրներու հնութիւնները : Իր աշակերտները, Տէր-Աւետիսեան, Օրբելի, Քալանթար եւն, որոնք յաճախ կ'աշխատակցէին իրեն Անիի պեղմանց ժամանակ, այդ արշաւախումբին մէջ էին : Վանի գրաւումէն ետքը հեռացաւ Մառ ժամանակ մը իւր սիրելի Անիէն, Տոսպեան աշխարհի մէջ ուրարտեան արձանագրութիւններ գտնելու յուսով : Սարգուր Բ. ի արձանագրութեան յայտնութիւնը, ի մէջ այլոց, կ'իյնայ այս շրջանին :

Հեռանալով Անիէն, հեռացաւ Մառ նաեւ բանասիրական-հնագիտական ասպարէզէն : Լեզուագէտը, որ կ'ապրէր իր մէջ, արձակեց լեզուի կազմանքները, եւ նետուեցաւ հրապարակ քարոզելու աշխարհի իւր լեզուաբանական նորալուր վարդապետութիւնը — Յարեթարեանութիւնը : Դեռ կը հնչէ ականջիս իր մէկ խոստովանութիւնը : 1912 Յուլիսին էր, երբ ընկերակցութեամբ Դիտ. Վարդանեանի եւ Պրոֆ. Աղոնցի այց ելած էի Անի : Աւերակաց քաղաքի մեծ դրան առաջ կը սպասէր մեզի Ուսուցչապետը : Հայերէն ողջունի ճառով մը ընդունեցաւ անիկա իւր վաղեմի ծանօթները Պետերբուրգէն : Կը բարձրանայինք դարն ի վեր . Ուսուցչապետն եւ ես մտերմական խօսակցութեան մէջ էինք . հարցուցի ի մէջ այլոց . «Ի՞նչ կ'ըլլան Աթոսեան արշաւանքէն ձեռք բերուած աւարները . ի՞նչ նորութիւններ մտադիր է տալ գիտութեան բանասիրական-մատենագրական աշխարհէն» : Երկվարկեան մը կանգ առաւ . չեչտուած վանկերով պատասխանեց . «Հարցուցէք լեզուագիտական աշխարհէն . ունիմ շատ պատգամներ :

Ես նախ լեզուագէտ եմ եւ ապա բանասէր» : — «Բայց աւելի մեծարժէք են Ձեր բանասիրական աշխատանքները» : Հաճոյ չերեւցան խօսքերս Ուսուցչապետին : Փոխուեցաւ խօսակցութեան նիւթը Անիի պեղմանց շուրջը : Երկրորդ տեսութեանս 1920ին ի Վիեննա, գտայ զինքը բոլորանուէր նուիրուած Յարեթարեանութեան : Եկած էր Եւրոպա ուսումնասիրելու Ետրուսկացիներու եւ Բասկերու բնագաւառները : 1920, Նոյեմբեր 18ին կը գրէր Լայբցիգէն առ Հ. Յ. Տաչեան :

Մեծայա(ր)դ Հայր սուրբ .

Ժամանակ շատ է անցել մեր կապերի լիզելուց, թղթակցութիւն կտրելուց յետոյ . բայց դուցէ Միարանութեանդ մէջ չէ մոռացւած՝ մի ժամանակ եղել է հայագէտ Մառ : Սոյն Մառս դրում եմ թախանձանօք աջակցել տեղեկութիւններով իմ նոր գիւտերի ինչպատ յանձնառնուած գիտական ճանապարհորդութիւնը կատարողիս . գտել եմ ետրուսկերի նախահայաստանից ծագում եւ ետրուսկերի հետ եւ Բասկերի նոյն շրջավայրի բնակիչներէ հետ աղագիցութիւնը, մի խօսքով այն, ետրուսկներ եւ բասկեր լեզուով պատկանում են յարեթարեան ցեղին ըստ իմ տեսութեան, եւ հիմակուայ ճամփորդութիւնս նպատակ ունի հին ետրուսկերի միջավայրում եւ բասկերի մէջ սրոջ ծրագրով ուսումնասիրութիւններ անել : Մի եւ նոյն ժամանակ Վիեննայից անցնելով չեմ ուզում առիթ ի գործ չզննել եւ չճանօթանալ հայազխուրթեան մէջ եղած նորութիւնների հետ : Հանդէս Ամսօրեայ, ուղում եմ յուսալ, ողջ առողջ է եւ իրան գործը շարունակում է անել :

Իմ խնդիրքս ուրեմն այս է, չզլանաք ինձ անմիջապէս իմաց տալ, կարող եմ թէ ոչ Վիեննայում մէկ ու մէկ Hotel'ում տեղ գտնել մի քանի օր անցկացնելու համար եւ եթէ նպատակ պայմաններ կը լինին տեղիդ գրադարաններում դրադուելու : Ծատ եւ շատ կը պարտաւորացնէք ինձ :

Սորին յարգանք
առ ձեզ
20. IX. 8. Պրոֆ. Ն. Մառ :

Ի հարկէ գտաւ Ուսուցչապետն ի Վիեննա ամէն գիւրութիւն իւր փափաքները գոհացնելու համար : Ծատ գոհ մնաց մանաւանդ, երբ Հ. Տաչեանի «Ուսումն դասական հայերէն

լեզուի» գործին մէջ գտաւ Ետրուկացիներու եւ Բասկերու մասին ճոխ գրականութիւն մը :

Երկարագոյնս դադար առաւ Մառ Ի Պարիս : Հոս հրաւէր ստացաւ Արեւելեան Լեզուներու բարձրագոյն Դպրոցէն դասախօսութիւններու ընթացք մը կարդալու . զոր յանձն առաւ :

Վերադառնալով Պետերբուրգ միջամուկ եղաւ այլեւայլ կաղմակերպչական գործերու գիտական հողի վրայ : Ն. Մառ կը վայելէր ՈՒՐՀ. Իշխանութեան պետերու լիուլի վստահութիւնը :

Կառավարութիւնը մասնաւոր կերպով կը վայելայէր անոր «Յարեթարանութիւնը» : Լեւնինգրադ հիմնուեցաւ յատուկ Յարեթագիտական Ինստիտուտ : Մառ աւելի ընդարձակելու համար իւր հետազոտութիւնները, ելաւ միւսանգամ Եւրոպա . 1923 Նոյեմբեր 6ին կը գրէր ինձ Լայպցիգէն .

Մեծայարգ բարեկամ հ. ս. Ակիւնեան .

Տեսնում էք, նորից ելել եմ «ասպաշխարհից», այս անգամ Սպանիայի բասկերէնի եւ առ հասարակ Եւրոպայի նախաբնակիչների ուսումնասիրութեան նպատակով : Եթէ միջոցներս ներեն, մտադիր եմ Սիկիլիա կղզիի վրայ էլ ման գալ, այս երկու տարուայ միջոցում Միջերկրեայ ազգաբնակչութեան վերաբերեալ շատ նոր բաներ երեւան ելան յարեթագիտական հետազոտութիւնից : Պետրուգրադում Յարեթագիտական Ինստիտուտն էլ հիմնուեց : ... Մենք ծանր կորուստ կրեցինք, կրտսեր որդիս, քսանամէկ տարեկան մեռած էր մի քանի ամիս (յառաջ), երբ մենք մեր առաջին չարատանջ գիտական ճամբորդութիւնից տուն դարձանք : Ինձ մասին չեմ սսում, բայց կինս ամէն կարելիութիւն միւլիթարութեան կորցրել է :

Միշտ յարգանք առ Ձեզ
Ն. Մառ :

Ուշադրութեան արժանի են նամակիս վերջին տողերը, ուր կ'ողբայ Ուսուցչապետը իւր կրտսեր որդւոյն մահը : Մեծ պատերազմին ալ կորանցուցած էր իւր երէց որդին :

Ն. Մառ վերջին անգամ Եւրոպայ այցելեց 1927ի վերջերը, նոյն հետազոտական նպատակով :

Զարմանալի էր Մառի տոկոնութիւնը : Կը զգար նա իւր մէջ ոյժ եւ կը գտնէր ժամանակ ոչ միայն լեզուաբանական բազմակնճիռն

հարցերու լուծման նուիրուելու եւ իւր նոր վարդապետութիւնը հիմնաւորելու, այլ եւ միջամուկ կ'ըլլար դասախօսութիւններ տալու, հիմնարկութիւններ կաղմակերպելու : Ըմբռնելու համար իր տարած գործերը պէտք է ոչ միայն ակնարկ մը նետել այն գրական արտադրուեց վրայ, զոր տուաւ անիկա յընթացք 50 տարիներու, այլ եւ նկատի առնել իւր տիրուպաները, որոնք յետ պատերազմեան շրջանին շնորհուեցան իրեն : Նիկողայոս Մառ ՈՍՀՄ Գիտութիւններու Ակադեմիայի փոխ-նախագահ էր, Նիւթական Կուլտուրայի Պատմութեան Պետական Ակադեմիայի Նախագահ, ՈՍՀՄ Գիտութիւններու Ակադեմիայի Անդրկովկասեան մասնաճիւղի նախագահ, Թիֆլիսի Կովկասագիտական Ինստիտուտի ղերեկատոր, Յարեթարանութեան հիմնադիր, Գիտութիւններու Ակադեմիայի կուսակցական կաղմակերպութեան անդամ եւն եւն : Գնահատելով իր ծառայութիւնները Կենդնործկոմի նախագահութիւնը 1933, Դեկտ. 1ին անուանած էր զինքը «Գիտութեան վաստակաւոր գործիչ» :

Ն. ՄԱՌ ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷՁԻ ՎՐԱՅ

Գրական ասպարէզի վրայ առաջին քայլն առաւ Ն. Մառ 1888ին վրացերէն լեզուով գրուած յօդուածով մը՝ «Վրացերէն լեզուի ընդթիւ եւ նկարագիրը», որ լոյս տեսաւ Իվլիթի թերթին մէջ : Յաջորդ-տարին տուաւ նոյն թերթը Մառի գրչէն շարք մը յօդուածներու, որոնք կը զբաղէին վրացերէն խումբ մը ձեռագիրներու նկարագրութեամբ : Այնուհետեւ նախընտրեց Ն. Մառ արտայայտուիլ աւելի ուսներէն լեզուով, թէեւ կարող էր ազատ գրել ինչպէս վրացերէն, նոյնպէս հայերէն եւ անգլիերէն : Հմուտ էր աւելի քան 30 լեզուներու, ներս առնելով հին եւ նոր գրական լեզուները, Կովկասեան ժողովուրդներու բարբառները եւն : Հայերէնը կը խօսէր եւ կը գրէր . իր թղթակցութիւնները Հայոց հետ հայերէն լեզուով կը կատարէր . աշխատակցած է հայերէն յօդուածներով «Հանդէս Ամսօրեայ» եւ «Արաքս»ի : Իր մտքի շտեմարանը եթէ ունէր լեզուական անսպառ պաշար, ունէր նաեւ անհուն հմտութիւն արեւելեան գրականութեան . մասնաւորապէս բաց էին իր տեսութեան առջեւ հայ եւ վրական մատենագրութեան ծալքերը : Առաւել հմտութիւնը յաճախ գայթակղեցուցիչ ալ էր իր գրական-լեզուաբանական պրպտումներու մէջ : Երեւոյթ-

ներու բացատրութեան համար ատաղձներու կուտակումը եւ անոնց իրարու հետ ունեցած աղերսական կապերու որոնումը ոչ միայն հանած են զինքը երբեմն ուղիղ գծէն, այլ եւ խափանած են մտքի յստակ արտայայտութիւնը . եւ արդէն նա ինքը կը դանդաղէր թէ «առ հասարակ իմ ոճս ծանր է . գրում եմ երկար նախադասութիւններով, մանաւանդ այդ յօդուած (О начальной истории Армении Анонима) շատ է փասուում այս կողմից» (Թուղթ առ ՈՒՐ. «Հանդ. Ամսօրեայ»ի ; 27 Նոյեմբ. 1894) :

Մառի գործունէութեան մէջ կը նկատենք երեք զլիւսաւոր ուղիներ, որոնց վրայէն ընթացած է .

- ա. Բանասիրական .
- բ. Հնագիտական .
- գ. Լեզուաբանական :

Կ'ուզենք այս երեք ուղիներու վրայ արտադրած աշխատանքները թուել մի առ մի, աւելի սիրով կենդնորոնացնելով ուշադրութիւնը հայագիտութեան հայող երկասիրութեանց վրայ : Ամփոփ ցանկ մը Ն. Մառի 50ամեայ գրական վաստակներու տուած է Յարեթարանական Ինստիտուտը իւր Recueil japhétique հրատարակութեան 2. հատորին մէջ, Լեւնինգրադ 1930, էջ 255—283, ընդ ամէնը թուով 414 աշխատութիւն, մեծ եւ փոքր : Օգտուելով այս ցանկէն, յառաջ պիտի բերեմ Մառի հայագիտական գրուածքներու վերնագիրները, ուսական նոր ուղղադրութեամբ, առընթեր տալով հայերէն թարգմանութիւնը : Այս գրուածքներու մեծագոյն մասը ունինք մեր Մատենադարանին մէջ, ժամանակ առ ժամանակ նուէր ուղարկուած հեղինակէն ՈՒՐագրութեանս :

1. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Բանասիրական այս փոքր եւ մեծ աշխատութիւնները կը հային հաւասարապէս հայվրական մատենագրութեան : Մառի մեծագոյն արդիւնքն եղաւ, որ երեւան բերաւ երկու գրացի աղգերու իրարու հետ ունեցած քաղաքակրթական սերտ առնչութիւնը : Հայն աւելի տուող քան առնող կը հանդիսանայ : Հեղինակը ըլլալով ծանօթ երկու ժողովուրդներու ալ լեզուին եւ գրականութեան, ջանացած է միշտ իւր գրուածքներու մէջ նկատի առնել երկու ժողովուրդներու ալ գրաւոր ակնհայտութիւնները, երբ անոնք մերձաւոր կամ հեռաւոր աղերս ցուցուցած են ուսումնասիրուած

նիւթին հետ : Այս տեսակէտով խորագիրները յաճախ խարուսիկ են :

Բացի մասնաւոր հրատարակութիւններէ՝ Ն. Մառ հիմնադիրն եղած է երեք կարեւոր հաւաքածուներու, որոնք հիմնարկուած են հայ-վրական գրականութեան վերաբերեալ ատաղձներ եւ ուսումնասիրութիւններ լոյս ընծայելու . ասոնք են .

Тексты и Разыскания по армяно-грузинской филологии. [Издания факультета Восточных Языков Императорского С. Петербургского Университета.] С. Петерб. 4-м том I—II (1900—1910) = Բնագիրներ եւ հետազոտութիւններ ի նպաստ հայ-վրական բանասիրութեան : = TP.

Bibliotheca Armeno-georgica. Собрание древне-армянских и древне-грузинских текстов, издаваемых Императорской Академией Наук. 4-м том I—V (С. Петерб. 1911—1915).

Христианский Восток, այն է Քրիստոնեայ Արեւելք, եռամսեայ ուսումնաթերթ, լոյս տեսած 1912—1920 = XV.

Հայագէտ Մառի աշխատութիւնը ըստ մեծի մասին լոյս տեսած են Ռուսական Հնագիտական Ընկերութեան Արեւելեան բաժնի Յիշատակարաններու մէջ. Записки Восточного отделения Русск. Археолог. Общества, զոր կը համառոտենք՝ ЗВО եւ Известия Археолог. Комиссии = ИАК. Журнал Министерства народного просвещения = ЖМНП.

1. К вопросу о „Варлааме и Иоасафе“. Из армянской Географии, приписываемой Вардану. ЗВО 4 (1889), 395—397.

Բարդամ եւ Յովսափ ըստ Վարդանայ ընծայուած Աշխարհագրութեան :

2. Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей. I—XVI. ЗВО 5 (1890), 211—241, 6 (1891), 135—228.

Թարգմ. Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս . նկատողութիւններ եւ քաղաածներ հայկական ձեռագրերից (Թարգմ. Ո. Անտիեան). Հանդ. Ամս., 1891, 260—272. 1892, 231—235, 268—271, 303—307 = Ազգ. Մատ. է., Վիեննա 1892, 80, էջ 90 :

3. Лиса и волк в западне. Из армянской книжной сказочной литературы. Живая старина 4 (1891), 144—155.

Աղուէսն ու գայլը թակարդի մէջ. հայ Առակադրքէն :

4. Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ պատահող «Կունդ Արամազդ» բաների առթիւ: Ա. ր. ա. ք. ս. Բ (1891), 59—60:

5. Հայկական ձեռագիրք ձեւարանի Արեւելեան լեզուացի Պետերբուրգ: Հանդ. Ամս., 1892, 45—54, 80—85, 111—116:

6. Переписка Фотия с армянским велик. князем Ашотом и армянским патриархом Захарию. Палестинский Сборник, XI, 1 (1892), 179—279.

Թղթակցութիւնք Փոռայ ընդ Աշոտայ իշխանին եւ կաթողիկոսին Հայոց Չաքարիայ. բնագիր եւ թարգմանութիւն:

7. Список рукописей Севанского монастыря. Из летней (1890) поездки в Армению. Москва 1892, IV + 59.

Յուշակ Աւանի վանքի (Հայերէն) ձեռագիրներու:

8. Сборники притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы. С. Петерб. 1894—1899. 8^o, XLI + 594 + XVI + 344 + X + 202.

Բաղուածարար թարգմ. Հ. Յ. Տաշեան «Ժողովածոյք Առակաց Վարդանայ, ըստ Ն. Մառի. աղբիւրքն եւ քաղուածքներ»: Աղբ. Մատ. 1, 2., Վրէննա 1900, 8^o, էջք ԺԱ + 193:

9. О начальной истории Армении Анонима. К вопросу об источниках Истории Моисея Хоренского. По поводу критических статей проф. А. Carrière. Византийский Временник I (1895), 263—306.

Անանունի Հայաստանի նախնական պատմութիւնք: Մ. Խորենացու պարբերական լոգոսներու առթիւ: Կիսով թարգմանուած Ե. Լաւրյանէ Հանդ. Ամս., 1895, էջ 18, 54, 108, 195, 297. 1898, էջ 313:

10. Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне. Из материалов для истории средневековой армянской литературы. Восточные Заметки. С. Петерб. 1895, էջ 9—34.

Պետրոս կաթողիկոսի եւ Յովհ. Կոզերն վարդապետի մասին զրոյցներ. Միջնադարեան Հայ մատենագրութեան պատմութեան նիւթերէն:

11. Хитон Господень в книжных легендах армян грузин и сирийцев. Сборник статей учеников барона В. Р. Розена. С. Петерб. 1897, էջ 67—96.

«Յազագոս Պատմութեան Տեան» գրուածքը Հայ, վրական եւ ասորական գրականութեան մէջ:

12. Армяно-грузинские материалы для истории душеполезной повести о Варлааме и Иоасафе. ЗВО 11 (1897), 44—78.

Հայ-վրական նիւթեր ի նպատակ պատմութեան հուշարական վարուց Բարդամայ եւ Յովանաիւ:

13. Թուեղեաց Երզը, спорный термин древне-армянского эпоса. ЗВО 11 (1897), 300—302.

Թուեղեաց Երզը. հին Հայկական վէպին վիճական յորջորջանքը:

14. К критике Истории Моисея Хоренского. Г. А. Халатянц: Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Византийский Временник 5 (1898), вып. 1—2, էջ 227—269.

Մ. Խորենացու Պատմութեան քննադատութեան ի նպատակ առթիւ Գ. Խալատյանի զործին՝ Հայկական վէպը Մ. Խորենացու Պատմութեան մէջ:

15. Из поездки на Афон. О грузинских рукописях Ивера. — О св. Варлааме. — О древне-грузинских переводах с армянского. ЖМНП 1899, март, էջ 1—24.

Գէպի Աթոս ուղեւորութենէն: Իվերոնի վրական ձեռագիրք: — Ս. Բարդամ: — Հին վրացերէն թարգմանութիւնք Հայերէնէ:

16. К вопросу о задачах армяноведения. ЖМНП (1899), июль, էջ 241—250.

Հայագիտութեան զործն եւ նպատակը:

17. Армяно-сирийские словарные заметки. I. վիշապ = ԼԵԱԸ. ЗВО 13 (1899) 033—034.

Գիտողութիւններ Հայ-ասորական բառազուգութեան շուրջը: Ա. վիշապ, ցւծր:

18. К вопросу о переводах с армянского на арабский язык. ЗВО 13 (1900), 35—38.

Հայերէնէ արաբերէն թարգմանութեանց մասին:

19. Ефрем Сирий. А. О днях празднования Рождества. В. Об основании первых церквей в Иерусалиме. Армянский текст с сирийскими отрывками в армянской транскрипции XII—XIII века. Исследование, издание и перевод. Тексты и Разыскания на армяно-грузинской Филологии, I (1900), 5—55.

Եփրեմ Ասորի. Ա. Վասն աւուր ասի ծննդեան Գրիստոսի: Բ. Վասն շինութեան առաջին եկեղեցեաց յերուսաղէմ: Հայ բնագիրք հանդերձ ասորերէնով. ասորին տառադարձուած Հայերէն գրերով. ԺԲ.—ԺԳ. դար: Գննութիւն, հրատարակութիւն եւ թարգմանութիւն:

20. Ипполит. Толкование Песни песней. Грузинский текст по рукописи X века, перевод с армянского. Исследование, перевод, издание. ТР III. С. Петерб. 1901, 8^o, СХV + 32 + 67 էջք.

Հիպոպոլիտոս. Մեկնութիւն Երզոյն. Վրացերէն բնագիր ըստ Ժ. դարու ձեռագրի. թարգմանուած Հայերէնէ: Գննութիւն, թարգմանութիւն եւ հրատարակութիւն:

21. Об единстве задач армяно-грузинской филологии. Кавказский Вестник, No. 3, 1902, 15—29.

Հայ-վրական բանասիրութեան մէջ կէտ նպատակին:

22. Новооткрытый армянский текст „Паралипоменон“. (К вопросу о переводах св. Писания на арм. язык.) Кавказский Вестник, No. 4 (1902), 1—18.

Մնացորդաց զբերն նորագիտ Հայերէն բնագիրը (Ս. Գրոց Հայերէն թարգմանութեան շուրջը):

23. Арабское извлечение из сирийской хроники Марибаса. ЗВО 14 (1902), 078—091.

Մարիրասոյ ասորերէն ժամանակագրութեան արաբերէն քաղուածքները:

24. Критика и мелкие статьи: Мученичество отроков колайцев. — Из „Письма Езника к Маштоцу“. — О святых, как помощниках и целителях. — Армянская приписка XVIII века о расстрижении и ссылке католикоса Грузии Антония. — Словарные заметки: 1. Персидские музыкальные термины в грузинском. 2. Յճճճճ ԵճԵճ. 3. ՃՅԺԺԺԺ, ՅՅԺԺԺԺ. 4. ՅՅՅՅՅՅ, ԲԵՆՆԵԶ. 5. ասպետ, *asupaiti, ТР V. 53—73.

Գննադատութիւն եւ մանր յօդուածներ: Կոլացի մանկանց նահատակութիւնը: — Եզնիկայ առ Մաշտոց թուղթը: — Սուրբերը իրբեւ օգնականք եւ բուժիչք: — Հայերէն Յիշատակարան մը ԺԸ. դարէն Վրաց Անասնիոս կաթողիկոսի կարգալուծութեան եւ աքսորման մասին: Բառախօսական դիտողութիւններ. 1. Պարսկերէն երաժշտական բաներ վրացերէնի մէջ: 2. Վրաց. վաղագի: 3. ՃՅԺԺԺԺ, վրաց. ճՅԺԺԺԺ: 4. Վրաց. գեհեգի, Հայ. ԲԵՆՆԵԶ: 5. Հայ. ասպետ:

25. Физиолог. Армяно-грузинский извод. Грузинский и армянский тексты, исследование, издание и перевод. ТР 6 (1903), XVI + 130.

Բարուախօս: Հայ-վրական խմբագրութիւն: Վրացերէն եւ Հայերէն բնագիրք, քննութիւնք, հրատարակութիւնք եւ թարգմանութիւն:

26. Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием. Арабская версия. ЗВО 16 (1905), 63—211.

Թարգմ. Յուսիկ արքեպ. «Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց եւ Ալանաց ի Ս. Գրիգորէ: Ի ուս հրատարակութեան կատարելը ըստ արաբերէն օրինակի յուսուցչապետ Ն. Մառ: Վաղարշապատ 1911:

27. Арк’аун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-

халкедонитах. Византийский Временник, 12 (1906), No. 1—2, 1—68.

Արքաուն, մոնղոլական յորջորջումն քրիստոնէից, Հայ-քաղկեդոնականներու հարցին հետ աղբերի մէջ:

28. К вопросу об арк’ауне. ХВ 2 (1913), 144—145.

Արքաունի շուրջը:

29. Учебный план факультета восточных языков по армяно-грузинской филологии. 1906, էջք 10.

Արեւելեան լեզուներու ֆակուլտէտի ուսման ծրարիւրը Հայ-վրական բանասիրութեան համար:

30. Исторический очерк грузинской церкви с древнейших времен. К вопросу об автокефалии грузинской церкви. Церковные Ведомости 1907, No. 3, прил. էջ 107—142.

Պատմական ակնարկ մը հին վրական եկեղեցու մասին: Վրաց եկեղեցու ինքնազուրի ըլլալու հարցին շուրջը:

31. Армянские слова в грузинских Деяниях Пилата. ЗВО 17 (1907) 24—29.

Հայերէն բաներ Գործք Պիղատոսի գրուածքին վրացերէն թարգմանութեան մէջ:

32. Деяния трех святых близнецов-мучеников Спевсипа, Еласипа и Меласипа, грузинский текст по двум рукописям X века. ЗВО 17 (1906/7), 285—344.

Սպեւսիպայ, Եղասիպայ եւ Մեղասիպայ վկայարանութիւնք, վրացերէն բնագիր Ժ. դարու երկու ձեռագիրներու համեմատութեամբ:

33. Антиох Стратиг. Плененне Иерусалима Персами в 614 г. Грузинский текст исследовал, издал, перевел и арабское извлечение приложил Н. М.: ТР IX (1909), VI + 82 + 93 + 66 + 1 էջք:

Անտիօք Ստրատիգ. Երուսաղէմի առումն Պարսիկներէն 614 թ.: Վրացերէն բնագիրը ուսումնասիրեց, հրատարակեց, թարգմանեց եւ արաբերէն քաղուածքը աւելցուց Ն. Մ.:

34. Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI—XII века. ЗВО 19 (1909), 53—113.

Յովհ. Պետրիցեցի, Վրացի նոր պղատոնական ԺԱ.—ԺԲ. դարու:

35. Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание и перевод с Дневником поездки в Шавшнию и Кларджию. с 65 рисунками. ТР VII (1911), էջք 012—LXX + 151 + 216.

Գէորդ Մերչուլ: Վարք Ս. Գրիգորի Խանձիացուց: Վրացերէն բնագիր: Ներածութիւն, հատարակութիւն:

և թարգմանութիւն հանդերձ օրագրութեամբ ուղեւորութեան ի Շաւշէթ եւ ի Կղարջս. 65 նկարներով:

36. Бог *Տաթաօս* у Армян. Известия Акад. Наук 1911, էջ 759—774.

Տաթաօս աստուածը Հայոց քով:

37. Фрако-армянский Sabadios-aswat и сванское божество охоты. Изв. Акад. Наук 1912, էջ 827—830.

Փրակեան-Հայկական Սարադիոս-ասվատ եւ սվանական որսորդութեան աստուածութիւնը:

38. Об армянской иллюстрированной рукописи из халкедонитской среды. Известия Акад. Наук. 1911, 1297—1301.

Հայերէն նկարազարդ ձեռագիրներ քաղկեդոնական շրջանէ:

39. След *Աղափ* у Армян. ХВ 1 (1912), 41—42.

Աղափի հետքը Հայոց քով:

40. К вопросу об *Աղափ* в Армении. ХВ 2 (1913), 145.

Աղափն ի Հայս հարցին շուրջը:

41. О новом списке сборника армянских церковных песнопений. ХВ 2 (1913) 145.

Հայ Շարահնոցի մասին:

42. Заметки по текстам св. Писания в древних переводах армян и грузин. ХВ 2 (1913), 163—174, 263—274.

Դիտողութիւններ Ս. Գրոց հայ եւ վրական հին թարգմանութեանց մասին:

43. Эчмиадзинский фрагмент древнегрузинской версии Ветхого Завета. ХВ 2 (1914), 378—388.

Հին Կտակարանի հին վրական թարգմանութեան հատակոտորներ յիշմիածին:

44. Отрывок армянского пергаментного Евангелия лапидарным письмом. ХВ 4 (1915), 195—197.

Հայերէն մագաղաթեայ երկաթագիր աւետարանի մը հատակոտորը:

45. Книжная легенда об основании Киева на Руси и Куара в Армении. Известия гос. Аакадемии истории материальной культуры 3 (1924), 257—287.

Գրուոր գրոց մը Կիւե եւ Հայաստանի Կուար քաղաքներու հիմնարկութեան մասին:

46. Le Synaxaire géorgien, rédaction ancienne de l'union armens-géorgienne, publié et traduit d'après le manuscrit du couvent Iviron du Mont Athos. Paris 1926 [Patrologia orientalis, XIX, fasc. 5].

Այլ եւ այլ գրախօսականներ առթիւ հրատարակութեանց՝

47. Գալուստ Տէր-Մկրտչեան, Հայկականք Ա.—ԺԲ. ЗВО 9 (1895), 305—311:

48. Գալուստ Տէր-Մկրտչեան, Աղաթանգեղոսի աղբիւրներից: Յիշատակ դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից որ վկայեցին յԱռհա: Վաղարշապատ 1896: — Византийский Временник 4 (1897), Թ. 3, էջ 667—674 = Թարգմ. Կոմիտաս վարդապետ, Հանդ. Ամս., 1898, էջ 267—271:

49. А. Аннинский, Древние армянские историки, как исторические источники. Одесса 1898, История армянской церкви (до XIX века). Кишинев 1900. — ЗВО 15 (1904), 0137—0150.

50. Месроп Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык. — ТР V, 29—53.

Գրախօսութիւն՝ Մեսրոպ Տէր-Մովսէսեան, Պատմութիւն Ս. Գրոց հայերէն թարգմանութեան:

51. F. M. E. Pereira, Vida d. S. Gregorio, patriarcha da Armenia. ЗВО 15 (1904), 185—187:

52. И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении. т. I. ЖМНП 1908, май, էջ 200—223.

53. Н. Г. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, ХВ 5 (1916), 52—66.

Ն. Ադոնց, Դիոնիսիոս Փրակացի եւ հայ Մեկնիչներ:

2. ՀՆԱԳԻՏԱԿԱՆՔ

Առանձին հետաքրքրութիւն երեւան բերաւ Ն. Մառ նաեւ դէպ ի հնութիւններով հալուստ Հայաստանի հնագիտական մնացորդները: Ի սկզբան աւելի նախապատմական շրջանի հնութիւններու դարձուցած էր իւր ուշադրութիւնը: Քիչ յետոյ անցաւ պատմական շրջանի: Կատարեց պեղումներ նախ Արտաշատ, Գառնի, Դուին: Ի վերջոյ նպատակայարմար տեսաւ աշխատանքները ամփոփել Անիի շուրջը: Աւելի քան տասը տարի պեղեց Անին: Աւերակաղնայաններու տակէն երեւան բերաւ նոր աշխարհ. անհետացած մշակոյթի մը լեօսուն բեկորները: Դեռ չէին աւարտած պեղումները, երբ հարկադրուեցաւ Մառ հեռանալ իւր սիրած հնավայրէն: Թէպէտ ընդարձակ եւ համառօտ ուսումնասիրութիւններով եւ գեղուցումներով ծանօթացուց իւր պեղումներու արդիւնքը, բայց չկրցաւ իւր վերջին խօսքն ըսել Մառ Անիի մասին, պրոպոզիւմներու, քրքրումներու ամփոփ, ամենայն ինչ պարունակող նկարագրութիւնը տալ: Անիի՝

օրագրութիւններու դասաւորուած ամփոփումը կը լսենք թէ պատրաստած էր մեծ վաստակաւորն իրրեւ յետ-մահու գործ հրատարակելու համար:

Կը ներկայացնեմ հոս հնագիտական աշխատութիւններու ամփոփ ցանկը, ներս առնելով նաեւ խալդական սեպագիր արձանագրութեանց մասին լոյս տեսած աշխատասիրութիւնները:

54. Имя Бут или Буд в армянской надписи VII в. по р. Хр. ЗВО (1892), 322—326. «Բուտ կամ Բուդ անունը է. դարու հայ արձանագրութեան մէջ»:

55. Раскопки в Эриванской губернии. Отчеты Археолог. Комисии 1892, 75—86. *Պեղումներ Երեւանեան նահանգի մէջ:*

56. Заметки о трех армянских надписях, помещенных в XIII вып. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 17 ((1892), 191—197.

Դիտողութիւններ հայերէն երեք արձանագրութեանց մասին, որոնք դեռեղուած են (նոյն հրատարակութեան) ԺԳ. հատորին մէջ:

57. Новые материалы по армянской эпиграфике. Ани. Аламан. Мрен. Багаран. Еровандакерт. В. Талын. ЗВО 8 (1893), 69—103.

Նոր նիւթեր հայ արձանագրութեան համար. Անի, Ալաման, Մրէն, Բագարան, Երուանդակերտ, Վ. Քալին:

58. Надгробный камень из Семиречья с армянско-сирийской надписью 1323. ЗВО 8 (1893), 344—349.

Թարգմ. Ն. Ադոնց՝ «Մի տաղանաբար եօթնդեղից»: Հանդ. Ամս., 1895, էջ 33—36:

59. Мнимое географическое название Ъротастак эготастак в Истории Агафангела. ЗВО 9 (1895), 191—197.

Աշխարհագրական անուն համարուած ընտանտակը Աղաթանգեղոսի Պատմութեան մէջ:

60. Армения (о раскопках и археологических работах 1893 г.). Отчеты Археологической Комиссии 1893, 33—36.

Հայաստան. 1893 տարւոյ պեղումներու եւ հնագիտական աշխատանքներու մասին:

61. Эриванская губерния. ОАК 1899, 90—94.

Երեւանեան նահանգը (առթիւ Դունոյ պեղումներուն):

62. Армянская церковь в Аруче. Известия Археологическ. Комисии, вып. 12 (1904), 61—64.

Արուճի եկեղեցին:

63. Заметка о двух армянских надписях, найденных в Херсонесе (со снимком). Известия Археолог. Комиссии, вып. 10 (1904), 106—108.

Դիտողութիւն ի Քերսոն գտնուած երկու արձանագրութեանց մասին:

64. Ани, столица Армении. Историко-археологический набросок. Братская помощь пострадавшим армянам. Москва 1899, էջ 197—222.

Անի, Հայաստանի մայրաքաղաք: Պատմա-հնագիտական ակնարկ:

65. Раскопки в Ани в 1904 г. Известия Археологической комиссии, вып. 18 (1906), 72—94.

1904 թուին Անի կատարուած պեղումները:

Краткий каталог Анийского Музея (с рисунками). Анийская серия, No. 1. С. Петерб. 1906, 8^o, էջ III + 32.

Համառօտ ցուցակ Անոյ հնագրանի (նկարներով). Թարգմ. Ն. Ադոնց. Անոյ շարք 1 (Ս. Պետերբ. 1906):

66. О раскопках и работах в Ани летом 1906 г. Предварительный отчет. С 1 в красках, 13 фототипическими и 3 цинкографическими таблицами и с 18 рисунками в тексте. ТР 10 (1907), էջ IV + 64.

1906 թուի պեղումներն ու աշխատանքներն յԱնի:

67. Реестр предметов древности из Ани (с десятью рисунками в тексте. Анийская серия, No. 2. С. Петерб. 1908, VII + 64.

1907ին Անի կատարուած արշաւանքէն ձեռք բերուած առարկաներու ցուցակը:

68. По поводу работы архитектора Т. Тораманяна о древнейших формах Эчмиадзинского храма. ЗВО 19 (1909), 052—063.

Թ. Թորամանեանի աշխատութիւնը էջմիածնի տաճարին հնագոյն ձեւերու մասին:

69. Новые археологические данные о постройках типа Ереруйской базилики. ЗВО 19 (1909), 064—068.

Նոր հնագիտական տուեալներ Երերայքի բազիլիկայի տիպի շինութեանց մասին:

70. Об учреждении Анийского археолог. института. ИАН 1910, 438—444.

Անոյ հնագիտական Ինստիտուտի հիմնարկութեան մասին:

71. Камень с армянскою надписью из Ани в Азиатском Музее. ИАН 1910, 1149—1151.

Հայերէն արձանագրութեամբ քար մը Անիէն Ասիական թանգարանի մէջ:

72. Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910 г.) с фототип. воспроизвед. ИАН 1910, 1433—1442.

Վրաց Եպիփան Կաթողիկոսի արձանագրութիւնը (Անիի պեղումներէն):

73. XI Анийская археологическая кампания. Приложение к труду „Книжная история Ани и раскопки на месте города“. С 2 табл. и. 60 рис. ТР XIII (1913), 1—61.

ԺԱ. Հնագիտական արշաւանքն յԱնի:

74. К датировке криторской надписи Текорского храма. ХВ 3 (1914), 56—71.

Տեկորի եկեղեցւոյ արձանագրութեան թուականը:

75. К армянской надписи Санахинского моста. ХВ 3 (1914), 314—315.

Սանահինի կամուրջին հայերէն արձանագրութիւնը:

76. К исследованию пещер Ахпата и Санахина. ХВ 4 (1915), 194—195.

Հաղբատի եւ Սանահինի քարայրներու հետազոտութիւնը:

77. Ն. Մառի գրչէն է նաեւ «От Редактора» ներածական մասը հայ վիճակն հնագրութեան մասին, որ զետեղուած է Կ. Կոստանեանցի «Վիճակն Տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց» գործին սկիզբը. Ս. Պետերբուրգ 1918, էջ I—XX (Bibliotheca armeno-georgica, II), թէեւ հեղինակին ստորագրութիւնը չի կրեր:

78. Халдская клинообразная надпись из села Леска Ванского округа. ИАН 1915, 1731—1738

Վանի շրջանի Լեզկ գիւղի խաղաղական սեպակիր արձանագրութիւնը:

79. Записка о регистрации как вывезенных, так и брошенных на месте на произвол судьбы рукописей и древностей занятой нами части Турецкой Армении. ИАН 1915, էջ 1711—1719.

Մեզմէ զբաւուած Տաճկահայաստանի թէ արտահանուած եւ թէ իրենց տեղը բախտին ձուլուած ձեռագիրներու եւ հնութիւններու ցուցակը:

80. Программа для работ С. В. Тер-Аветисяна. ИАН 1915, էջ 1893—1894.

Ս. Տէր-Աւետիսեանի աշխատութեանց համար ծրարիր:

81. Кавказский культурный мир и Армения. Журнал Министерства народного просвещения 1915, июнь, 280—330.

Կովկասեան քաղաքակիրթ աշխարհն եւ Հայաստան:

82. Памятники армянского искусства. Ани. Дворцовая церковь (ընդ խմբագրութեամբ Ն. Մառի), 1915.

Հայ գեղարուեստի յուշարձաններ. Անի. Արքունի եկեղեցին:

83. Описание дворцовой церкви в Ани (Анииские древности). СПб. 1916.

Անոյ արքունի եկեղեցւոյ նկարագրութիւնը:

84. О Кавказском Историко-археологическом институте. ИАН 1917, 962—994.

Կովկասի պատմական-հնագիտական Ինստիտուտը:

85. Материалы по халдской эпиграфике из командироки И. А. Орбели в Турецкую Армению. ЗВО 24 (1917), 37—124.

Նիւթեր խաղաղական արձանագրութեանց մասին, զորոնք հաւաքած է Յ. Օրբելի ի Տաճկահայաստան:

86. Обломки Делибабинской халдской надписи. ЗВО 24 (1917), 125—132.

Դելիբարայի խաղաղական արձանագրութեան բեկորները:

87. Надпись Сардура II, сына Аргиштия, в Даш-Керпи. С. Петерб. 1919. ((Зап. Кавк. му 3, Сер. В, 1.)

Սարգուր Բ. ի, Արզիշտի որդւոյն, արձանագրութիւնը ի Դաշ-Կերպի:

88. Фрагмент халдской надписи из Алашкерта. Известия Гос. Академии истории материальной культуры 1 (1920), 51—60.

Խաղաղական արձանագրութեան մը բեկորը բերուած Ալաշկերտէն:

89. Надпись Русы II из Маку. ЗВО 25 (1921), 1—54.

Մակուէն բերուած Ռուսա Բ. ի արձանագրութիւնը:

90. Ani, la ville arménienne en ruines d'après les fouilles de 1892—1893 et de 1904—1917. Revue des Etudes Arméniennes 1 (1921), 395—410.

91. Надпись Сардура II из раскопок ниши на Ванской скале (Археолог. экспедиция 1916 г. в Ван). Петроград 1922.

Սարգուր Բ. ի արձանագրութիւնը Վանի պեղումներէն:

3. ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆԻ

Լեզուարանական հետազոտութեանց մէջ ընթացաւ Ն. Մառ բոլորովին նոր, ինքնագիւտ ճանապարհով: Ենթադրեց լեզուներու հին գերզաստան մը, որ ապրած ըլլայ Հիմալայէն մինչեւ Ատլանտեան անհուն տարածութեան վրայ¹: Լեզուներու այդ գերզաստանը

¹ 1920 Նոյեմբերին, երբ Վիեննա կը գտնուէր Ն. Մառ, ունեցայ առիթ խօսելու իրեն հետ Յարեթարանութեան մասին. հարցուցի թէ ի՞նչ սահմանի մէջ կ'ամփոփուին յարեթական լեզուները: Աշխարհագրութեան մէջ սկսաւ ցոյց տալ Հայաստան, Վրաստան, Կովկասեան ժողովուրդներ. եւ ձեռքի յանկարծական շարժմամբ ծիր մը գծեց եւ ըսաւ. «ըսովանդակ աշխարհը»:

թողուցած է հետքեր իր ճանապարհի վրայ. ստոնք եւ Կովկասեան լեզուներն եւ Բասկերէնը. նաեւ Հայերէնը պահպանած է իւր մէջ կարեւոր նշմարներ այդ նախաւոր լեզուախումբէն, զոր Յարեթական կ'անուանէ: Յարեթականն ունի ազդակցական կապ Սեմականին եւ Քամականին հետ: Իսկ Հնդեւրոպական լեզուն ոչ այլ ինչ է բայց եթէ Յարեթականին քաղքենի բարբառը², ուստի եւ Հնդեւրոպական լեզուագիտութիւնն ալ — որուն «քաղքենի մտածողութեան խանձարուրքն եւ ստոր համապատասխանող գիտական մեթոդէն» թէպէտ դժուարութեամբ, բայց ազատեց ինք զինքը Յարեթական լեզուագիտութիւնը — կը ներկայացուի «մարմին ի մարմնոյ եւ ոսկր յոսկերաց մեռնող քաղքենի ընկերութեան, որ ձեւուած յերկրուած է մի միայն այն նպատակով որ Եւրոպացիները «իրենց գաղթականական արիւնախանձ քաղաքականութեամբ» կարենան նուաճել արեւելեան ազգերը: Մառի գրութիւնը այսպէս իւր զարգացման դազաթնակէտին՝ լեզուագիտութեան մէջ զազունի քաղաքական ձգտում կը մտցնէ եւ նոյն ուղիով իւր կը զինուի ոչ միայն «արեւելեան ազգերը» պաշտպանելու «հնդեւրոպականաց» յարձակման դէմ, այլ եւ նոյն «յափշտակիչ» ձգտումներով նուաճողական արշաւանքներ կատարելու «Եւրոպական ազգերու» քով: Միջոցի մէջ խորութիւն չի գրուիր: Լեզուներ համեմատութեան կ'անուուին. բառեր կը ստուգարանուին առանց որոշ լեզուարանական օրինաց. պատահական երեւոյթները բաւական կ'ըլլան ծանրակշիռ մեկնութեանց համար: Ինչպէս Dirg արտայայտուած է, Յարեթարանութեան մէջ Ն. Մառ չինած է Պրոկրուստեան անկողինը, որուն վրայ կը

² 1924, Սեպտեմբեր ամիսն էր. կը նաեւ Նովորասիակէն դէպի Բաթում: Կէս ճանապարհին ուշադրութիւնս զբաւեց ձերբունի մը, որ նստած սեղանի մ'առաջ՝ ընկղմած էր զբաւական աշխատանքներու մէջ. չճանչցայ: Բիչ յետոյ բարձրացուց այդ ձերբունին զլուրը, նայեցաւ իմ կողմս. սոք ելաւ եւ յառաջացաւ դէպի ինձ: Ն. Մառն էր: Ողջունեց զիս սիրով. առաջին խօսքն եղաւ. «Նոր գիւտ մ'ըրած եմ»: Հետաքրքրուեցայ: «Հաստատած եմ թէ Հնդեւրոպական լեզուն Յարեթական լեզուի քաղքենի (Կրուքուական) բարբառն է»: Ափ ի բերան նայեցայ Ուսուցչապետին. ես կը յուսայի լսել բանասիրական աշխարհէն նոր գիւտ մը: Ժամանակը չէր վիճարանելու. չորհարարեցի «նոր գիւտը»: Այլ եւս կասկած չկար ինձ համար թէ Ուսուցչապետը ժամանակակից հովէն կը տարուէր: Խօսեցանք էջմիածնի ձեռագիրներու մասին. որոնց ուսումնասիրութիւնը իմ ուղեւորութեանս զլիաւոր նպատակն էր: Ուսուցչապետը ելաւ Սոխում, ուր պիտի մասնակցէր Արխաղեան Ընդհ. Համագումարին:

պրկէ բոլոր դժբախտ լեզուները, զորոնք կրնայ ձեռք ձգել իւր տենդազին հետազոտական գործունէութեան մէջ: Բանասէրի եւ լեզուագէտի կոչումն է գիտութեան եւ ոչ քաղաքականութեան ծառայել: Յարեթարանութեան «յարաչարժ, զինամիկ այս բնոյթը, կը գրէ Ա. Յովհաննէսեան³, հասկանալի է զարձնում հարկաւ «անջատումները» այն երեւոյթը, որ տեղի ունէր շարունակ Մառի շկոյւյի ներսում, Ուսուցչի կատարած ամէն մի անկիւնադարձին նրանից յետ է մնացել աշակերտների այս կամ այն խումբը: «Անջատումը» կատարեալ վիճ ստեղծեց ուսուցչի եւ նրա աշակերտներից ոմանց միջեւ, չնորհիւ այն խոշոր շրջադարձի, որ կատարեց Մառը յեղափոխութիւնից յետոյ — հայագիտական, վրացագիտական, կովկասագիտական, Փորմալիստական եւ նացիոնալ դեմոկրատական գիրքերի վրայ թողնելով երբեմնի նրա հետեւորդներին»: . . .

92. Этимология армянского «սեպուհ» и грузинского სეფე «сепе». ЗВО 5 (1890) 286—289.

Թարգմ. «Հայոց Սեպուհ, Վրաց Սեփէ բառերու ստուգարանութիւնը»: Հանդ. Ամս., 1892, 164:

93. Заметки по армянскому языку. ЗВО 7 (1892), 73—79.

Նկատողութիւններ հայ լեզուի մասին:

94. Древне-армянская хрестоматия с армянско-русским словарем для начинающих. С. Петерб. 1893, III + 171

Հատընտիր դրաբար հայերէնի հանդերձ հայերէն-ուսերէն բառարանաւ:

95. Этимология двух терминов армянского феодального строя «սեպուհ» *sepuh* = **sepurh* и «նախարար» *naq'arar* = **naharar*. ЗВО, 11 (1897) 165—174.

Սեպուհ եւ նախարար բառերու ստուգարանութիւնը:

96. О предполагаемом коренном родстве трех армянских слов «ճմարիտ», «ճչրիտ» и «ճիշտ». ЗВО 11 (1897) 298—300.

Ճմարիտ, ճչրիտ եւ ճիշտ բառերու կարծեցեալ արմատական նոյնութիւնը:

97. Գրախօսութիւն. А. Мсерианц, Этюды по армянской диалектологии, част I. ЗВО 13 (1901), 0120—0134. Իսկ част II, 1. ТР V (1903), 1—29:

98. Грамматика древне-армянского

³ Սորհրդային Հայաստան, 1934, Թ. 292:

языка. Этимология. С. Петер. 1903, XXXVIII + 303 էջ.

Հին հայերէնի բերականութիւնը. Ստուգարանութիւն:

99. Этимология имени Мхит'ар и глагола Մխիթարել տղիմարել „утешать“, ЗВО 17 (1907) 30—31.

Մխիթար անուն եւ մխիթարել բային ստուգարանութիւնը:

100. Яфетическое происхождение армянского слова margarey „пророк“ ИАН 1909, էջ 1153—1158.

Մարգարէ բառին յարեթական ծագումը:

101. К вопросу о ближайшем родстве армянского языка с иверским (тубал-кайнскими языками или ш-языком). ЗВО 19 (1909), 069—072.

Հայերէնի Իբերականի հետ ունեցած մերձաւոր աղբյուրի մասին:

102. Яфетический k в армянском языке. ЗВО 19 (1909), 0154—0159.

Յարեթական k հայերէնի մէջ:

103. Два яфетических суффикса -te (ti → -t) в грамматике древние армянского (хайского) языка. ИАН 1910, էջ 1245—1250.

Երկու յարեթական յետադաս մասնիկ -te (ti → -t) հին հայերէն բերականութեան մէջ:

104. Яфетическое происхождение хайского բերան beḡan „рот“. ИАН, 1910, էջ 1491—1494.

Հայերէն բերան բառին յարեթական ծագումը:

105. Сирийское происхождение хайск. դամբարան dambaran [„оссуарий“] „смогила“, „склеп“. ЗВО 20 (1911) 64—66.

Գամբարան բառի ասորական ծագումը:

106. Яфетические элементы в языках Армении I, 1911, էջ 137—145: — II. անդ, 469—474: — III. անդ, 1912, էջ 595—600 4: — IV. անդ, 1912, էջ 831—834: — V. անդ, 1913, էջ 175—181: — VI. անդ, 1913, էջ 417—426: — VII. անդ, 1914, էջ 357—364: — VIII. անդ, 1914, էջ 1235—1240: — IX. անդ, 1916, էջ 233—238: — X. անդ, 1918, էջ 317—348: — XI. 1919, էջ 2307—2310:

Յարեթական տարրեր Հայաստանի լեզուներու մէջ:

107. О сирийских заимствованиях в хайском. ХВ 2 (1913), 147.

108. К дате эмиграции мосохов из Армении в Сванию. ИАН 1916, էջ 1689—1692.

Մոսոքներու գաղթը Հայաստանէն ի Սուանիա:

4 Այս հատուածը գուրս մնացած է R]ի ցուցակէն:

109. Армянский термин arq-ay. ИАН 1920, էջ 100—111.

Հայերէն arq-ay բառը:

110. tam-dam (գաղափարագիր [tam-dam] «ամուսին») բառի յարեթական ծագումը: Հանդէս Ամսորեայ, 1921, էջ 78—83, 220—227:

111. ձեռնարկ. անդ, էջ 227:

112. Яфетиды. Восток 1 (1922), 81—92. Եղիշ. Die Japhetiden, Der neue Orient, 8 (1922), 262—268 եւ Հարեթականներ. Նորք (Երեւան), Թ. 2 (1922), 166—178:

113. Հայկական մշակոյթը, նրա արմատները եւ նախապատմական կապերը ըստ լեզուագիտութեան: Պարիս 1925:

114. Материалы по хемшинскому наречию армянского языка. Записки Коллегии востоковедов 1 (1920), 73—80.

Նիւթեր Համէլէնի հայ բարբառին համար:

115. По поводу русского слова „сало“ в армянском описании хазарской трапезы (к вопросу о древнерусско-кавказских отношениях). Тексты и разыскания по кавказкой филологии 1 (1925), 66—125.

Ռուսերէն սալո բառը հայերէն արձանագրութեան մը մէջ: (Հին-ուստական եւ կաւկասեան յարաբերութեանց ինչդր շուրջը):

Այս ցանկը թեթեւ պատկեր մը միայն կու տայ Մառի գրական-հնագիտական-լեզուաբանական հմտութեան: Եռուզեո կեանքը, զոր ապրեցաւ նա մերթ Համալսարանի կաթեդրի առջեւ, մերթ ուղեւորութեանց, մերթ աւերակներու եւ մերթ վարչական եւ կազմակերպչական ասպարէզներու վրայ, ոչ ժամանակ եւ ոչ հնարաւորութիւն տուաւ իրեն մտամտի ոտներու գրասեղանի առջեւ նուիրուելու ընդարձակ աշխատութիւններու, յատկապէս մշակելու պեղումներէ եւ ուղեւորութիւններէ ձեռք բերած ատաղձները: Նա չկրցաւ երկարամեայ տոկուն աշխատութիւններով ձեռք բերած բանասիրական, հնագիտական եւ լեզուաբանական հմտութիւնը յորինուածական գործերու մէջ ամփոփելու: Կ'աւաղէր այս իրողութիւնը եւ ինքը:

1915ին կը զբեր առ Յովհաննէս Թումանյանի հետեւեալ շատ նշանակալից տողերը⁵, որոնք կը բնորոշեն Մառի հոգեկան ապրումները:

Սիրելի Յովհաննէս ջան.

Աստուած պահէ ինձ պետական խորհուրդը մտնելուց. ընտրող լինել ինձ համար!

⁵ Նորհրդային Հայաստան, 1934, Թ. 292:

ճանր է եւ եթէ իմ դարուց առաջ սարքված չլինէր, ես չէի համաձայնի:

Ժամանակ քիչ է մնում. մտնենում է սահմանս եւ շատ կ'ուզենայի «գիտութեան ասպարիզում հանած պանծալի անւանդ» համաշափ գոնեա գործեր արտագրէի: Այս մասում շատ կասկածներս տանջում են ինձ. կարիք մեծ կայ ե'ւ դիտական, ե'ւ հասարակական տեսակէտից. գործելու շատ բան կայ, բայց քիչ աշխատողներ են երեւում, գրեթէ բնառոյ:

«Ժողովուրդի զարհուրելի վիճակը» չէր կարող չազդել, բայց սեղ եւ ժամանակ չախտի ներքն յուսահատվել, ոչ միայն «պետութիւններ», այլ եւ ժողովուրդներ պիտի փնտոեն եւ գտնեն նոր եղանակներ, նոր ճանապարհներ, նոր գործելակերպեր եւ համապատասխան կազմակերպութիւններ:

Համբոյր եղբայրադուց. 1915:

Ն. Մառ:

Ն. Մառ շահեցաւ իւր գործերով բարձր անուն բանասէրներու անձուկ կաճառի մէջ. բայց չգտան իր գործերը ընթերցողներու լայն շրջան, ոչ ուսու, ոչ հայ եւ ոչ վրացի ժողովուրդներու քով. անոնք արտասահմանին ալ մատչելի չեղան: Ետտ նկարագրական են այս մասին Ն. Մառի տողերը, ուղղուած առ Հ. Յ. Տաշեան. կարեւոր կը համարիմ յառաջ բերել այս սեղ այդ տողերը.

Ս. Պետերբուրգ, 1900, IX. 16.

Wassilewsky Ostrow 1. 4, m. 7, log. 3.

Մեծարգոյ բարեկամ Հ. ս. Յակովբոս:

Ետապում եմ շնորհակալութիւնս յայտնել ձեր ընծայի համար⁶: Կրկին շնորհակալութիւն, որ իմ՝ մեծամասնութեան համար անմատչելի՝ լեզուով գրուած աշխատասիրութիւնս մատչելի էք դարձրել համ հայացներով եւ համ երկար եւ բարակ մտածութիւններին կարճատամբ կարգալը դիւրացնելով: Առ հասարակ ուսու արեւելագետների գրութիւն դժուար է, որովհետեւ արեւմտեան մասնագետների մէջ ուսուց լեզուն իմանալ շատ հազուադէպ երեւոյթ է. իսկ հայագետի, ուսու հայագետի գրութիւնը կրկին դժուարա-

⁶ Կ'ակնարկէ Հ. Յ. Տաշեանի «Ժողովածոյքն Առաւկաց Վարդանայ»:

նում է՝ իմ գրուածներս՝ ուսուերէն չիմանալով արեւմտեան արեւելագետներ չեն կարող կարգալ, միւս կողմից մերոնք՝ ուսաստանցիք եւ առանձնապէս ուսուներ՝ լայնահայեաց բանասիրական հետաքրքրութիւնից զուրկ լինելով եւ հայագիտութեան հոտ էլ առած չլինելով չեն ուզում կարգալ եւ չեն էլ կարգում: Իսկ եւ իսկ մի քանի շարաթ է ամենաառաջադէմ ուսու լրագրի խմբագրութիւնը («Сѣверный Курьеръ») ինձ հետ բանակուելի մէջ բռնուելով եւ անելանելի նեղ գրութեան մէջ ընկնելով փողոցային միջոցների դիմեց եւ մի լիրբ հայհոյանքներով լի յօդուածի մէջ յերեսս շարտեց այսպիսի հարցեր՝ «Ի՞նչ է պ. Մառ? Ոչ ինչ. հայ դրականութեան մասնագէտ, որ ոչ ինչով չէ իրան ցոյց տուել ոչ աշխատութեամբ, ոչ տաղանդով եւ ոչ շնորհով եւն»: Հասարակութիւն լսեց եւ լուռ մնաց: Իրաւ, որտեղից իմանան, թէ ես աշխատում եւ գուցէ Հայոց դրականութեան եւն ուսումնասիրման մէջ բան մը արել եմ: Իրաւ որ մարդ կարող է ճանր ըտպէներ ունենալ, բայց լինում են աւելի դիւրեկան եւ հաճելի ըտպէներ, երբ ձեզնէ կազմուած տեղեկատուութիւններից հաւատս ամբապնդում է, որ ապագայում գոնեա ոչ մի գիտնական մանրակրկիտ հատորին չի կորցնուի անհետեւանք եւ անուշադիր: Ետտով կը ստանաք իմ վերջին յօդուածներս, որոնցից թէպէտ մեծամասնութիւնը վրացերէնի վերաբերում է, բայց աննշուրթիւն ունի եւ հայագիտական հարցերի հետ: Սրտանց շնորհակալութիւն դրկելով մաղտում եմ ձեզ ամէն բանում յաջողումն ի փառս եւ յօղուս մեր մասնագիտութեան:

Ն. Մառ:

Հայոց քով վայելեց եւ պիտի վայելէ Ն. Մառ բարձր, անմոռանալի անուն մասնաւորապէս շնորհիւ իր Անի կատարած պեղումներուն: Թէեւ ժամանակ մը պղտորեցան հայ ժողովրդեան մէկ մասին տրամադրութիւնը հանդէպ մեծ վատտակաւորին, բայց այն անցաւոր ամպ մըն էր, որ եկաւ եւ անցաւ: Մառ, թէպէտ ի մօրէ վրացի էր, բայց ունեցաւ քաջութիւնը ի սէր ճամբարութեան պաշտպանել հայ անունը հանդէպ Ակալի Ծերեթելի վրացի բանաստեղծին, որ յանդգնած էր՝ տարուած աղգամորութեամբ՝ վատահամբաւել հայ անունը, ուրանալ հայ մշակոյթը:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ